

Սփյուռքի դիրքորոշումը ՀՀ պետության
նկատմամբ

Պատմությունը ցույց է տվել, որ պատմական տարբեր փուլերում սփյուռքահայերը տարբեր դիրքորոշումներ են ունեցել Հայաստանի իշխանությունների նկատմամբ: Սփյուռքում եղած կուսակցություններն ու իրենց համակիրները, որոնք ամբողջ սփյուռքահայության 10 տոկոսն էլ չեն կազմում, ըստ իրենց քաղաքական դիրքորոշումների են այս հարցին մոտեցել: Օրինակ, ՀՀ Դաշնակցությունը 70 տարի պայքարել է Հայաստանի իշխանությունների դեմ և իրեն հովանավորել են տարբեր եւրոպական երկրներ ու Ամերիկան: Հայաստանի անկախացումից հետո կրկին պայքարել է Հայաստանի իշխանության դեմ և միայն այս վերջին 8 տարիներին, մաս կազմելով Հայաստանի իշխանությանը, դադարել է այդ պայքարը: Այսպիսով՝ 87 տարիների ընթացքում շուրջ 80 տարի պայքարել են Հայաստանի իշխանությունների դեմ, այսինքն՝ նրանք աշխատել են Հայաստանի պետությանը թուլացնել և միջազգային մասշտաբով նրան վարքաբեկել: Ռամկավար Ազատական կուսակցությունը այլ գործընթաց է որդեգրել. Հայաստանի պետության բնույթից անկախ միշտ պաշպանել է Հայաստանի պետությանը և ամեն կերպ տնտեսապես և բարոյապես նպաստել է Հայաստանի հզորացմանը և նույն քաղաքականությունը շարունակում է մինչ օրս: Մնացած ոչ կուսակցական կամ անկախ սփյուռքահայերը միշտ ցանկացել են իրենց հայրենիքը տեսնել բարգավաճ ու հզոր: Գինա այս երևույթը մեզ մտածել է տալիս, պատմաբաններն ու քաղաքագետները պետք է ուսումնասիրեն և ասեն, թե որ գործընթացը և դիրքորոշումը ավելի շատ է օգնելու մեր հայրենիքի հզորացմանը:

Մեր կարծիքով իշխանությունները կը գան ու կը գնան, և հայրենիքը միշտ պետք է հզորանա և սփյուռքահայության պարտականությունն է իր ուժերի չափով թիկունք հանդիսանալ նրան, սակայն եթե այդ ցանկությունն էլ գոյություն չունի, գոնե նրա դեմ պայքար չտանի և չթուլացնի պետականությանը:

Մեր համայնքում փոքրաթիվ անձնավորություններ ու խմբակներ, որոնց կարելի է մատների վրա հաշվել, համակրելով Լևոն Տեր Պետրոսյանին, ամեն կերպ թույն են թափում Հայաստանի ժողովրդի մեծամասնության կողմից ընտրված իշխանության դեմ: Սա ցույց է տալիս նրանց անհիմն գաղափարախոսությունը և քաղաքական տկարությունը: Համայնքում ոչ դաշնակցական հասարակական միավորների դիրքորոշումը այն է եղել, որ անկախ Հայաստանի Հանրապետության իշխանավորների բնույթից, միշտ պաշտպանել ու աշխատել են նրա հզորացման ուղղությամբ:

Իհարկե, մենք երբեք այն կարծիքին չենք, որ սփյուռքահայը չպետք է քննադատաբար մոտենա ՀՀ տարբեր երևույթների նկատմամբ, այլ հակառակը՝ պետք է ուժեղ վերլուծության ենթարկելով ՀՀ տարբեր բացասական երևույթները, աշխատի իր շինիչ առաջարկներն ու ուղղությունները ներկայացնել: Օրինակ, ՀՀ վերջին նախագահական ընտրությունների ժամանակ ոչ ոք չի արդարացնում Հայաստանի Հանրապետության ազգային հեռուստատեսության աշխատառձը, կամ հետընտրական շրջանում բոլոր սրտցավ միավորներն ու սփյուռքահայերը խրախուսում են երկխոսությունը տարբեր կողմերի միջև և մտահոգված են միասնականությունը թուլացնող և միջազգային վարկը իջեցնող երևույթներով: Սակայն այս բոլոր նկատառումները լինում են եղբայրաբար և շինիչ և այդ մթնոլորտում, վստահ ենք, որ Հայաստանի պետությունը նկատի կառնի այդ առաջարկները, սակայն, եթե սփյուռքահայը հենց սկզբից թշնամաբար է տրամադրվում իշխանության նկատմամբ, պարզ է, որ նման անձնավորությունների առաջարկների նկատմամբ կասկածանքով են մոտենալու:

Հույսով ենք, համայնքում սփյուռքահայության դիրքորոշումները ՀՀ պետականության և իշխանության նկատմամբ լինեն երկխոսությունների ու քննարկումների նյութ, որը կարտացոլվի նաև մամուլի էջերում և որին կմասնակցեն համայնքի մտավորականներն ու քաղաքական գործիչները:

Այս համարում
Հայերեն բաժին

- 1- Սփյուռքի դիրքորոշումը ՀՀ պետության նկատմամբ1
- 2- Լուրեր – Իրանահայ համայնք2
- 3- Լուրեր – Հայաստան3
- 4- Սփյուռք5
- 5- Միջազգային6
- 6- Հասարակական7
- 7- Մշակույթ10

Սյունակների տղոջան պատճարով
Հրաչյա Աճառյանը Պարսկաստանում
եւ Հայ հին գրականություն հոդվածների շարունակությունը
կտպագրվի հաջորդ համարում

Պարսկերեն բաժին

- 1- Հայոց մեծ Եղեռնի լուրեր1
- 2- Լուրեր-Իրան, Հայաստան, Միջազգային2

Ծափկի առաջին էջում՝

«Ազգ» օրաթերթի խմբագիր՝ Բ. Ավետիսյանը դասախոսելիս

Ծափկի վերջին էջում՝

Րաֆֆի Միության պարախմբի ելույթը

Կազմի նկարները Հրայր Հարությունյանի

Համար 142, Մայիս 2008թ.

No. 142, May 2008

ماہنامہ لويس - شماره ۱۴۲ اردیبهشت ۱۳۸۷

Ցավակցական

«Լույս» ամսագրի խմբագրական կազմը անհուն վշտով համակված ցավակցում է Լույսի խմբագրության անդամ Տիկին Սուսաննա Համբարձումյանին ու բոլոր հարազատներին իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

Գրիգոր Համբարձումյանի

ցավալի մահվան առթիվ:

«Լույսի» խմբագրություն

Լուրեր

Իրանահայ Համայնք

Հայաստանի «Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիր՝ պրն. Հակոբ Ավետիսյանը Թեհրանում

2008 թվականի ապրիլի 24-ից մինչև 28-ը Թեհրանի Հայ Մարզանշակության «Րաֆֆի» համալիրի հրավերով Թեհրանում էր գտնվում Հայաստանի Հանրապետության կարևոր և ազդեցիկ օրաթերթերից մեկի՝ «Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիր և մանկավարժական համալսարանի հեռուստաժուռնալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր պրն. Հակոբ Ավետիսյանը:

Ապրիլի 24-ին նա ծանոթացավ ՀՄՍ «Րաֆֆի» համալիրի դրվածքին ու աշխատանքներին, մտերմիկ զրույց ունեցավ համալիրի ակտիվ կազմի հետ:

Ապրիլի 25-ին, բանախոսեց «Րաֆֆի» համալիրի կողմից կազմակերպված եղեռնի զոհերի ոգեկոչման 93-րդ տարելիցին նվիրված միջոցառմանը, որտեղ մասնակցում էին ավելի քան 1000 մարդ: Իր բանախոսության ընթացքում նա անդրադարձավ Հայոց ցեղասպանության և Հայաստան-Թուրքիա հարաբերություններին, որի մանրամասնությունները կներկայացվեն առաջիկա համարում:

Պրոֆեսոր Հ. Ավետիսյանը 14 տարեկանից Բեյրութում եղել է Հայ Բարեգործական Ընդհանուր Միության անդամ, ավատել է Հայաստանի Հանրապետության պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, այնուհետև Լիբանանում աշխատել է որպես հայոց լեզվի ուսուցիչ, ապա Ռամկավար Ազատական կուսակցության «Ձաթթոնք» պաշտոնաթերթի խմբագիր: Անդամագրվել է իր սիրած կուսակցությանը և մինչ այժմ պահպանում է իր անդամակցությունը: Հայաստանի անկախացումից հետո մեկնել է Հայաստան և ստանձնել է իր կուսակցության կողմից պարտականություն՝ հրատարակելու «Ազգ» օրաթերթը: «Ազգ»-ի և հատկապես պրն. Հ. Ավետիսյանի ազդեցությունը մեծ է եղել Հայաստանի իրադարձությունների վրա:

Թեհրանում ապրիլի 26-ին նա բանախոսել է «Հայ Բարեգործական Ընդհանուր Միության» եղեռնի զոհերի ոգեկոչմանը նվիրված ծրագրին, որտեղ անդրադարձել է նաև աշխարհում «Ընդհանուր Հայ Բարեգործական Միության» գործունեությանը, հատկապես Հայաստանի անկախացումից հետո և ջարդի տարիներին:

Նա այցելեց «Ալիք» օրաթերթի կենտրոնատեղ ու մտերմիկ զրույց ունեցավ գլխավոր խմբագրի հետ, ծանոթացավ «Ալիք» հաստատության հսկայական հնարավորություններին: Նրա հետ հարցազրույց անցկացվեց, «Ալիք» օրաթերթի խմբագրությունում:

Պրն. Հ. Ավետիսյանը այցելեց ԹՀԹ-ի բարեխնամ Առաջնորդ Տ.Սեպուհ Արք. Սարգսյանին, Իրանում ՀՀ դեսպանատուն և մտերմ զրույց ունեցավ արտակարգ և Լիազոր դեսպան պրն. Կարեն Նազարյանի հետ, վերջինս էլ պրն. Հ. Ավետիսյանին տեղեկություններ փոխանցեց երկու երկրների բարեկամական հարաբերությունների ու մոտակա ծրագրերի մասին: Վերջերս կյանքի կոչված Իրան-Հայաստան բարեկամություն ընկերությունը պրն. Լևոն Ահարոնյանի գլխավորությամբ հուրընկալեց պրոֆեսոր Հ. Ավետիսյանին, որտեղ նա ծանոթացավ միության նպատակներին և մոտակա գործունեությանը: Խոսվեց նաև փոխադարձ համագործակցությունների շուրջ:

Իրանի կրոնական փոքրամասնությունների ձեռքի աշխատանքների առաջին ցուցահանդեսը

2008 թվականի ապրիլի 29-ին «Սաղ Աբադ» թանգարանին կից ավանդական ռեստորանում տեղի ունեցավ Իրանի Իսլամական Հանրապետությունում կրոնական փոքրամասնությունների ձեռքի աշխատանքների առաջին ցուցահանդեսի բացման արարողությունը: Ցուցահանդեսը տևեց 5 օր, որտեղ մեծ տեղ

էին գրավում հայ մասնագետների ձեռքի աշխատանքները, որոնց հնարամտությունները ներկայացվեցին այցելուներին: Ցուցահանդեսի բացման արարողության ժամանակ իրենց խոսքն արտահայտեցին ԻԻՀ խորհրդարանում կրոնական փոքրամասնությունների պատգամավորները: Ելույթ ունեցան նաև Իրանի «ժառանգության ու մշակութային կազմակերպության» պատասխանատուները, որոնք անդրադարձան ձեռքի աշխատանքների արվեստի կարևորությանը, որտեղ իրենց ուրույն դերն են ունեցել իրանահայությունը: Նրանք նշեցին, որ ձեռքի աշխատանքները իրենց տեղը պետք է վերագտնեն իրանի և միջազգային շուկայում: Ծրագրի վերջում ներկաները այցելեցին ցուցահանդեսում ներկայացված Իրանի հինգ փոքրամասնությունների ձեռքի աշխատանքների տաղավառները:

Մեծ Եղեռնի ՉՈՒՄԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ 93-րդ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆԿԻՐՎԱԾ ՁԵՆՆԱՐԿ ԸՄՍ «ՐԱՖՖԻ» ՀԱՄԱԼԻՐՈՒՄ

Սույն թվի ապրիլի 25-ին (ուրբաթ) ՀՄՍ «Րաֆֆի» համալիրում տեղի ունեցավ Մեծ Եղեռնի 93-րդ տարելիցին նվիրված ձեռնարկ: Մարդաշատ սրահում ներկա էին նաև ԻԻՀ-ում ՀՀ դեսպանատան ներկայացուցիչներ, համայնքի ազգային և մշակութային կառույցների ներկայացուցիչներ և այլ հրավիրյալներ: Օրվա բանախոսը հրավիրված էր Հայաստանից «Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիր մեծարգո պրն. Հակոբ Ավետիսյանն էր: Նա հիմնականում ամփոփ կերպով և բոլորին մատչելի հյուրահատուկ մտերմիկ պատմելաճով ներկայացրեց Հայաստան-Թուրքիա հարաբերությունների ընթացքը վերջին 18-19 տարիների ժամանակահատվածում: (Դասախոսության մանրամասնությունները կը ներկայացվի «Լույսի» առաջիկա համարներում):

Ծրագրի բացումը կատարվեց համալիրի կանանց երգչախմբի «Հայր մեր»-ի կատարմամբ: Այնուհետև սկսուտների մեծաքանակ խումբը մոմեր տեղադրեց Հրանդ Դիմքի նկարի առջև և երգեց ազգային հայրենասիրական երգեր, որոնց նվագակցում էր համալիրի սկաուտական բաժանմունքի ջազային նվագախումբը (Առնո Աբդալյան, Առլեն Աբդալյան, Հուսիկեն Սահարայան, Սարմեն Դիլանյան, Արամիկ Զարեհյան, Եմիլ Սուսախանյան և Նարինե Տեր Հովհաննիսյան): Կանանց երգչախումբը, որի ղեկավարն է Ջարուհի Ենգոյանը, ներկայացավ մի քանի հայրենասիրական երգով: Այնուհետև խոսք տրվեց ԻԻՀ-ում ՀՀ դեսպանորդ պրն. Գրիգոր Առաքելյանին, որը կարևորեց համայնքում մնան միջոցառումների անհրաժեշտությունը և ողջունեց բոլոր մասնակիցներին:

«Անլռելի զանգակատուն»-ից հատվածներ ասունքեցին Մեղվիկ Մինասյանը, Մագդինե Մինասյանը, Հուսիկեն Սահարայանը, Արթին Բաղունյանը, Լիլիթ Սարդարյանը, Արամիկ Զարեհյանը և ժայռ Խաջալյանը: Պարուսույց էլզա Մինասյանի ղեկավարությամբ համալիրի «Անի» մեծաքանակ պարախումբը ներկայացավ օրվա համապատասխան համարություններով, որը վերջում ամփոփված էր հայ ժողովրդի վերածնունդը խորհրդանշող պարով, որն էլ ավելի վեհություն հաղորդեց ծրագրի ավարտին: Վերջում շնորհակալական խոսք ասվեց բեմի պատասխանատու պրն. Հայկ Խաջալիին (մասիսների պատրաստման) և նկարիչ Լևիկ Նազարյանին «Անլռելի զանգակատուն» նկարի համար: Ուժգին ծափահարությունների ներքո հայտարարվեց ծրագրի ավարտը, սակայն ներկաները արտահայտելով իրենց գոհունակությունը, չէին շտապում թողնել սրահը:

Սուսաննա Համբարչյան

Հանգստարանի ծաղիկներից եկած եկամուտը ու՞ր է գնում

Վերջին քանի ամիսների ընթացքում Թեհրանի հայկական հանգստարանում ծաղիկների վաճառքից ստացվում է որոշակի գումար, որը պետք է մուծվի հանգստարանի կամ ԹՀԹ-ի Թեմական Խորհրդի դրամարկղ և բանկային հաշվին: Ըստ

հավաստի աղբյուրների, որը հույսով ենք, չհամապատասխանի իրականությանը, վերջին 4-5 ամիսների ընթացքում պարսիկ ծաղկավաճառից ամսական ստացվել է 700.000 թուրքական, սակայն ազգային դրամարկը է մուծվել շուրջ 150.000 թուրքական: Այս երևույթը, եթե համապատասխանում է իրականությանը, բացասական անդրադարձ կարող է ունենալ համայնքում և անվտանգության պատճառ կարող է դառնալ մեր ազգային իշխանության նկատմամբ: Թեմական խորհրդի կողմից պրն. Վիգեն Գալստյանը նշանակված է որպես կապ Բուրաստանի հանձնախմբի հետ և հույսով ենք նրա պարզաբանումներից հետո իրականությունը բացահայտվի: Հարկ է նշել, որ ծաղկավաճառի հետ, ըստ պրն. Վիգեն Գալստյանի, կնքվել է պայմանագիր, որից անտեղյակ է Բուրաստանի հանձնախմբը:

Հայաստան

ՀԲԸՄ-Ե ԿԶԱՐՈՒՆԱԿԻ ԶՈՐԱԿԻԳ ԼԻՆԵԼ

«Ազգ» օրաթերթ 30.04.08 - Ընդունելով ապրիլի 29-ին Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում Հայկական բարեգործական ընդհանուր միության կենտրոնական վարչության նախագահ Պերճ Սեդրակյանին, Ամենայն հայոց կաթողիկոսն իր գնահատանքն է հայտնել ազգամաստ բարեգործական ծրագրերի համար, որ ՀԲԸՄ-ն իրականացնում է Հայաստանում և սփյուռքում: Վեհափառ հայրապետը նաև գոհունակություն է հայտնել Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու և ՀԲԸՄ-ի միջև առկա սերտ համագործակցության համար: Պ. Սեդրակյանը վստահեցրել է, որ միությունը պիտի շարունակի զորավիգ լինել Մայր աթոռ Սուրբ Էջմիածնին նրա ազգային-եկեղեցական առաքելության արդյունավետ իրագործման մեջ: ՀԲԸՄ-ի մասին նախագահին երեկ ընդունել է նաև վարչապետ Տիգրան Սարգսյանը:

ԱՃՆԱՐԿԻ ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԱՎՑԻԱ ԱՅՍՕՐ՝ ՀԱՄԱՃԵՆԱՐՎԱՅԻՆ ՀԱՅՎԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԹԵՎԻ ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅԱՄԲ

«Ազգ» օրաթերթ 24.04.08 Համաշխարհային հայկական կոնգրեսի երիտասարդական կազմակերպությունների ասոցիացիան (ՀՀԿ ԵԿԱ) աշխարհի ավելի քան քսան երկրներում գործող հայկական երիտասարդական կազմակերպությունների հետ համատեղ ապրիլի 24-ին անց է կացնում մի շարք միջոցառումներ՝ նվիրված Հայոց ցեղասպանության 93-րդ տարելիցին: Միջոցառումների ծրագրում ընդգրկված են ցեղասպանության գոհերի հիշատակի օրվա մասին պատմող թուղթիկների պատրաստում և տարածում, հանդիպումներ, զրույցներ եւ դասախոսություններ այդ թեմայով, քայլարշավ, պասկադրում Հայոց ցեղասպանության գոհերի հուշարձաններին, ցուցահանդեսների կազմակերպում և այլն: Այս տարի ՀՀԿ ԵԿԱ-ն հատուկ ուշադրություն է դարձնում 2007-ի հուլիսի 9-11-ը Երեւանում տեղի ունեցած Համահայկական միջազգային երիտասարդական «21-րդ դարի մարտահրավերները և հայ երիտասարդությունը» խորհրդաժողովի ընդունած հռչակագրի իրագործմանը, որով հռչակվել է երիտասարդության հնարավոր աջակցություն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված գործընթացներին՝ որպես ազգային անվտանգության ապահովման կարեւորագույն գործոն: Վերլուծելով աշխարհի տարբեր հայկական համայնքներում իրականացվող միջոցառումները և հենվելով սեփական փորձի վրա՝ ՀՀԿ ԵԿԱ-ն որոշեց ի թիվս աշխատանքի այլ ձևերի և մեթոդների ձեռնարկել այնպիսի քայլեր, որոնք կարող են հասարակության ուշադրությունն ավելի արդյունավետ բեւեռել Հայոց ցեղասպանության փաստի վրա, օգնեն դրա դատապարտմանը հասնելուն, ուրեմն և համախմբեն հասարակության ուժերը ապագայում մարդկության կյանքում նման հանցագործությունների կանխման համար:

Այդպիսի արդյունավետ միջոցառումներից է ավտոարշավի անցկացումը, որի նշանաբանն է. «Սուրբակը մեր տունն է: Խաղաղության պահպանումը՝ մեր ընդհանուր գործը»: ԵԿԱ կոչին միացան տարբեր կազմակերպություններ ուք երկրներից՝ դրանով իսկ ակտիվ մասնակցություն ունենալով նման չարագործությունների՝ ապագայում կրկնվելու անթույլատրելիության պայքարին: Խաղաղության այս ակցիային միացել են Ռուսաստանում, Վրաստանում, Ուկրաինայում, Եստոնիայում, Բուլղարիայում, Հոլանդիայում, Սիրիայում, Իրանում գործող հայկական երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչները, մեր հայրենակիցները: Այսօր ավտոարշավի անցկացումից բացի, այս երկրներում կբաժանվեն նաև Հայոց ցեղասպանության մասին պատմող թուղթիկներ՝ տեղի բնակչության համար հասկանալի լեզվով: Ցեղասպանության ճանաչումը ոչ միայն գոհերի հիշատակի տուրքն է և պատմական արդարության վերականգնումը: Գնահատումը վրեժ չէ, այլ նախագուշացում: Դա հիշողություն է ընդդեմ սոցալազմի:

ՄԱՐԻԱ ՄԱՐՏԻՐՈՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹԻ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ-ԲԱՐԱՔԱԿԱՆ ՀԱՎԵԼԿԱՑ

«Ազգ» 18.04.08 Հայտնի արելեւազետ Նիկոլայ Հովհաննիսյանն իր հոդվածում նոր մոտեցմամբ առաջարկում է վերանայել Հայաստան-սփյուռք հարաբերությունները Հայաստանի և հայության անվտանգության ամրապնդման ռազմավարության տեսակետից: 27 հոկտեմբերի գործով Նաիրի Բաղալյանը Մ. Նահանգներից «Ազգին» հղած հոդվածում մի շարք բացահայտումներ է անում իր դեմ կատարված ցուցմունքների վերաբերյալ: Հայագիտության ամենաբեղմնավոր պարբերականին՝ «Պատմաբանասիրական հանդեսին» նվիրված հոդված է ստորագրել բանասիրական գիտությունների դոկտոր Անուշավան Զաքարյանը, Հայաստանին սպառնացող արտաքին վտանգներին և այդ ֆոնի վրա ներքաղաքական իրավիճակի վերլուծությանն է նվիրված Մ. Նահանգներից գրող-խմբագիր Արթուր Արմինի «Յո՛ երթա, Հայաստան» հոդվածը, մինչև հայ գործարարության պատմության մասնագետ Խաչատուր Դադայանը, շարունակելով ռուսաստանյան արդի քիզնեսի նշանավոր հայերին նվիրված իր հոդվածաշարը, այս անգամ անդրադարձել է Դանիել Խաչատուրովի, իսկ Հակոբ Ծուլիկյանը՝ ամերիկահայ գիտնական-գործարար Կարո Արմենի գործունեությանը: Մեր լրատվական դաշտի ներկա վիճակի վերաբերյալ իր տեսակետներն է պարզել Երեւանի մամուլի ակունքի նախագահ Բորիս Նավասարդյանը Սելանյա Բաղալյանի հետ հարցազրույցում:

Փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության կառուցվածքում

ԵՐԵՎԱՆ, 21 ԱՊՐԻԼԻ, ԱՐՄԵՆԻՊԵՏ: ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն այսօր հրամանագիր է ստորագրել Հայաստանի Հանրապետության նախագահի 2002 թվականի մարտի 16-ի հրամանագրում փոփոխություններ և լրացում կատարելու մասին: Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ նախագահի մամուլ գրասենյակից, հրամանագրով, ՀՀ կառավարության կառուցվածքում կատարվել են հետևյալ փոփոխությունները՝ 1) ՀՀ առևտրի և տնտեսական գաղափարային նախարարությունը վերանվանվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարություն. 2) ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը վերանվանվել է ՀՀ ֆինանսների նախարարություն. 3) ստեղծվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն: Սահմանվել է, որ Հայաստանի փրկարար ծառայությունը արտակարգ իրավիճակների նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմին է. 4) ՀՀ արտաքին գործերի նախարարության սփյուռքի հետ կապերի գործակալությունը վերակազմակերպվել է ՀՀ արտաքին գործերի նախարարության սփյուռքի հետ կապերի

պետական կոմիտեի՝ որպես նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմին: Հայաստանի Հանրապետության կառավարությանը հանձնարարվել է մեկամսյա ժամկետում ընդունել սույն հրամանագրից բխող համապատասխան որոշումներ:

- Այսպիսով, Հայաստանի Հանրապետության կառավարությունն ունի հետևյալ կառուցվածքը.

 1. Առողջապահության նախարարություն
 2. Արդարադատության նախարարություն
 3. Արտաքին գործերի նախարարություն
 4. Արտակարգ իրավիճակների նախարարություն
 5. Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն
 6. Բնապահպանության նախարարություն
 7. Գյուղատնտեսության նախարարություն
 8. Էկոնոմիկայի նախարարություն
 9. Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարություն
 10. Կրթության եւ գիտության նախարարություն
 11. Մշակույթի նախարարություն
 12. Պաշտպանության նախարարություն
 13. Սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարություն
 14. Տարածքային կառավարման նախարարություն
 15. Տրանսպորտի եւ կապի նախարարություն
 16. Քաղաքաշինության նախարարություն
 17. Ֆինանսների նախարարություն:

ՇՐՋԱՆԱԳԻՍ ՍՊԵՆՏԻՍԻԱՆԻ ԾԻՐՄԻՆ



Մահվանից միայն 80 տարի անց՝ երեկ հոգեհանգստի արարողություն կատարվեց հայկական երաժշտությունը սիմֆոնիկ հնչողության հասցրած եւ հարուստ ժառանգություն թողած կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանի շիրմին: Այն մատուցեց Աբ. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ Շահե քահանա Հայրապետյանը. «Մկրտված մարդը չէր կարող անհաղորդ մնալ Աստծո հետ»: Իսկ հոգեհանգստի արարողություն կազմակերպելու գաղափարը կոմպոզիտորի տուն-թանգարանի տնօրեն Մարինե Օթարյանինն էր. «Ժամանակ առաջ թերթերից մեկում ընթերցեցի «Այդպես էլ կոմպոզիտորի շիրմին հոգեհանգստյան կարգ չինչեց» հոդվածը» ու մտադրվեցի իրականացնել: Նրա տեղեկացմամբ, նախաձեռնությանը միացել են նաեւ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնը, Տերնոպոլի տնտեսագիտական, ազգային համալսարանի երեւանյան մասնաճյուղը, Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան եւ Ալ. Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցը: 1928-ին, կոմպոզիտորի մահվան օրը հոգեհանգստյան արարողություն չկազմակերպելու պատճառները տարբեր են, այդ թվում եւ աստվածամերժ հասարակարգը:

ՀՀ Նախագահի հրամանագրով՝ Երկքաղաքացիություն է շնորհվել 188 մարդու

ԵՐԵՎԱՆ, 7 ՄԱՅԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ Սահմանադրության՝ երկքաղաքացիությունն արգելող դրույթի վերացումից եւ «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում համապատասխան նորմի ամրագրումից հետո ՀՀ Նախագահի հրամանագրով՝ 188 քաղաքացիներ Հայաստանում ստացել են երկքաղաքացիություն:

ԵՐԿՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ, ԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ԵՎ ՄՈՒՏԵՒ ԱՐՏՈՆԱԳԻՐ

Երեկ ՀՀ ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչության պետ, ոստիկանության գնդապետ Ալվինա Զաքարյանը կրկին հանդիպեց լրագրողների հետ ու տվեց մի շարք պարզաբանումներ ՀՀ ընտրողների պետեզիստրի երկքաղաքացիության եւ ՀՀ քաղաքացու անձնագրերի նոր մոնոլի ներդրման հարցերի վերաբերյալ: Տեղեկացնում ենք, որ բացի «Ազգի» ինտերնետային էջից, ՀՀ ոստիկանության www.police.am էջից կարող եք մանրամասն տեղեկություններ ստանալ: Տվյալ Զաքարյանը նախ անդրադարձավ ԱՎ վարչության կառուցվածքում 2007-2008 թթ. կայացած նորամուտություններին ու նշեց, որ նախկինում գործող «հասցեների բյուրոն» լուծարվել է ու ստեղծվել է բնակչության հաշվառման պետեզիստր, որտեղ ներառված են ինչպես ընտրողների ռեգիստրը, ՀՀ բոլոր քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների, նորածինների, մահացածների ռեգիստրները, տեղադրվել են պահուցում՝ անձի տվյալների հետ նաեւ լուսանկարը:

«Օտարերկրացիների մասին ՀՀ օրենքը» գրեթե 80-90 տոկոսով փոփոխության է ենթարկվել: Օտարերկրացիները ՀՀ-ում ունեն կացության երեք կարգավիճակ՝ կացության ժամանակավոր կարգավիճակ, մինչեւ մեկ տարի ժամկետով, կացության մշտական բնակչի կարգավիճակ մինչեւ 5 տարի ժամկետով եւ կրկին 5 տարով երկարացնելու հնարավորություն: Կացության հատուկ կարգավիճակը (10 տարի ժամկետով) տրվում է միայն ծագումով հայերին՝ ՀՀ Նախագահի հատուկ կարգադրությամբ ու զանձվում է պետությունը 150.000 դրամի չափով: Կան նաեւ անձինք, որոնք ազատվում են այդ պետությունից, եթե ՀՀ-ում բարեգործություններ, ծառայություններ են մատուցել: Նոր օրենքով ՀՀ-ի սահմանը հատելուց անձին սահմանային կետերում տրվում է մինչեւ 120 օր մուտքի արտոնագիր: Նորություն է նաեւ, որ ՀՀ պետական սահմանի անցման կետերում ոչ բոլոր պետությունների քաղաքացիները կարող են ստանալ մուտքի արտոնագիր, դրանք են՝ Աֆղանստանը, Բանգլադեշը, Կամերունը, Չինաստանը (բացառությամբ Հոնկոնգի, Մակաուի), Եգիպտոսը, Հնդկաստանը, Իրաքը, Նիգերիան, Պակիստանը, Սաուդյան Արաբիան, Սոմալին, Շրի Լանկան, Սուդանը, Սիրիան, Վիետնամը: Իսկ Չինաստանում, Եգիպտոսում, Հնդկաստանում, Սիրիայում ՀՀ դիվանագիտական ծառայությունները պետք է տան Հայաստան մուտքի արտոնագիր:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԱՅՍ ՏԱՐԻ ԿՆՁՎԻ ԵՐԵՎԱՆԻ ԸՆՄԱՂՐՄԱՆ 2790-ԱՄՅԱԿԸ

Երեւանն ընդլայնում է միջազգային համագործակցությունը եւ ձգտում իր գործընկեր քաղաքների հետ հաստատել երկարաժամկետ հարաբերություններ: Այս մասին երեկ իրավիրած մամուլի ասուլիսի ժամանակ հայտնեց Երեւանի քաղաքապետարանի արտաքին կապերի վարչության պետ Դավիթ Գեւորգյանը: Ըստ նրա, Երեւանը ԱՊՀ եւ բալթյան երկրների քաղաքների միջազգային ասամբլեայի եւ Պատմական քաղաքների կոնգրեսի անդամ է: Առաջիկա ծրագրերին անդրադառնալով, Դավիթ Գեւորգյանը առանձնացրել է տարբեր շրջանի Երեւանի հիմնադրման 2790-ամյակի միջոցառումները, որոնց ժամանակ սպասվում են մեծաթիվ հյուրեր տարբեր քաղաքներից:

«Ինչպե՞ս են ազդել նախորդ օրերի անկարգությունները «Մոսկվայի տան» վրա» հարցին պատասխանելով, քաղաքապետարանի վարչության պետը պատասխանեց, որ «Մոսկվայի տունն» այժմ նորմալ գործում է, եւ նրա ղեկավարության հետ աշխատում են 2008-10 թվականների ծրագրերի վրա:

Ապրիլի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակը կազմել է 3 մլն 230,7 հազ. մարդ

ԵՐԵՎԱՆ, 9 ՄԱՅԻՍԻ, ԱՐՄԵՆԴՐԵՍ: Ապրիլի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակը կազմել է 3 մլն 230,7 հազ. մարդ, որից 2 մլն 069,5 հազ.-ը եղել է քաղաքային բնակչությունը, 1 մլն 161,2 հազ.-ը՝ գյուղական:

Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունից, 2008 թ-ի հունվար-մարտին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ՀՀ մշտական բնակչության թվաքանակի շարունակվող աճն ապահովվել է ի հաշիվ բնակչության բնական հավելածի ավելացման (2,4 տոկոս) եւ միգրացիայի մնացորդի բացասական ցուցանիշի նվազման (36,2 տոկոս):

Այս տարվա առաջին եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է 9 478 ծնված, որը 2007 թ.-ի նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 2,9 տոկոսով, իսկ ծնելիության ընդհանուր գործակիցը 1000 բնակչի հաշվով, համապատասխանաբար, աճել է 0,2 պրոմիլային կետով:

Այս տարվա առաջին եռամսյակում հանրապետությունում եկողների թվաքանակը նախորդ տարվա նույն ժամանակահատված համեմատ ավելացել է 12,8 տոկոսով՝ կազմելով 2 973 մարդ, իսկ մեկնողների թվաքանակը նվազել է 4,9 տոկոսով՝ կազմելով 3 922 մարդ:

Վերոնշյալ ժամանակահատվածում ՀՀ սահմանային անցման կետերով իրականացվող արտաքին ուղեւորաշրջանառության համախառն ծավալը կազմել է 512.1 հազ. ուղեւորություն, որը 85,5 հազ.-ով կամ 20,0 տոկոսով ավելի է 2007թ. նույն ժամանակահատվածի ցուցանիշից:

ԱՄԵՆԱՅՆ ՇԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՎԱՏԻԿԱՆՈՒՄ ԲՈՒՈՐ ԵՐԿՐՆԵՐԻՆ ԿՈՉ ԱՐԵՑ ՃԱՆԱԶԵԼ ՇԱՅՈՑ ՅԵՂԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը Վատիկանում աշխարհի բոլոր երկրներին կոչ է արել ճանաչել Հայոց ցեղասպանությունը: «Ասոշիեթթը պրես»-ի փոխանցմամբ՝ Վեհափառ հայրապետը, ելույթ ունենալով Հռոմի պապ Բենեդիկտոս 16-րդի հավատացյալների հետ շաբաթական հանդիպման ժամանակ, դիմելով Սուրբ Պետրոսի հրապարակում հավաքված հազարավոր մարդկանց, հորդորել է «բոլոր ազգերին եւ երկրներին միասնաբար դատապարտել բոլոր ցեղասպանությունները, որոնք տեղի են ունեցել պատմության ընթացքում»: «Այդ ոճրագործությունների ուրացումը նույնքան անարդար է, որքան այդ հանցանքները գործելը: Աշխարհի շատ երկրներ ճանաչել եւ դատապարտել են Օսմանյան թուրքիայում հայերի ցեղասպանությունը», մշել է Ամենայն հայոց կաթողիկոսը: Հավատացյալների հետ հանդիպման ժամանակ Բենեդիկտոս 16-րդը խոսել է հայ քրիստոնյաների դաժան փորձությունների մասին՝ «հատկապես վերջին դարի ընթացքում»:

Ներկայացվեց ՀՀ մշակույթի նախարարության պաշտոնական կայք-էջը

ԵՐԵՎԱՆ, 10 ՄԱՅԻՍԻ, ԱՐՄԵՆԴՐԵՍ:ՀՀ մշակույթի նախարարության գործունեության եւ հանրապետությունում իրականացվող մշակութային քաղաքականության մասին հասարակությունն այսուհետ հնարավորություն կունենա տեղեկություններ ստանալ նախարարության պաշտոնական կայք-էջից՝ www.mincult.am հասցեում:

Կայք-էջում առանձին բաժիններով ներկայացված են նախարարության պատմությունը՝ գերատեսչության

ծեւավորումից ու գործունեությունից առաջին հանրապետության ժամանաշրջանից մինչեւ արդի ժամանակները, կանոնադրությունը, կառուցվածքը, համագործակցությունը հասարակական, միջազգային, Սփյուռքի տարբեր կազմակերպությունների հետ: Էջում կարելի է գտնել նաեւ ոլորտը կարգավորող օրենսդրության, ՀՀ կառավարության, ԱԺ ներկայացված կամ դեռ մշակման փուլում գտնվող նախագծերի մասին տեղեկություններ: Կայքում տեղադրված է նաեւ «Զննարկումներ» բաժինը, որտեղ էջից օգտվողները տեղադրված նախագծերի մասին կարող են ուղղել իրենց հարցադրումներն ու առաջարկները:

ՇՈՒՇԵՐԵԿՂ՝ ՆՎԻՐՎԱԾ ԽՈՐԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ապրիլի 6-ին, ժամը 17:45-ին, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի է ունենալու «Նահատակ Յարթապետը» խորագրով հուշ-երեկո՝ նվիրված երանաշնորհ Տ.Տ. Խորեն Ա Սուրաբբեկյան Ամենայն հայոց կաթողիկոսի նահատակության 70-րդ տարելիցին: Հուշ-երեկոյի ընթացքում կլինի նաեւ արխիվային փաստաթղթերի եւ նյութերի ցուցադրություն: Հրավիրում ենք զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչներին մասնակցելու միջոցառմանը:



Մփյուռք

ՇԱՅԿԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԸ ԿԿԵՐԱՂԱՐՁԿԻ

Վիկտորիա (Լեդրա) փողոցի բացումը, համաձայն Կիպրոսի նախագահ Դիմիտրիս Խրիստոֆիասի եւ, այսպես կոչված, Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության առաջնորդ Մեհմեդ Ալի Թալաթի, հեռանկարներ է բացում Պաթոս դարպասի վերակառուցման համար, որի երկարությունը 100 մետր է: Այդ նպատակով Պաթոս դարպասի մոտ գտնվող հայկական թաղամասը կվերադարձվի օրինական տիրոջը՝ Կիպրոսի հայ համայնքին: Վիկտորիա փողոցի հայկական թաղամասը ընդգրկում է Սուրբ Աստվածածին եկեղեցին, հայկական թեմերը, Հայոց ցեղասպանության հուշարձանը, Մելիքյան-Ուզունյան տարրական դպրոցը եւ հայկական մանկապարտեզը: Տեղի հայերը հույս ունեն, որ Վիկտորիա փողոցի հայկական թաղամասը կվերադարձվի համայնքին ավելի լավ վիճակում, քան նախկինում էր՝ մինչեւ դրա զավթումը թուրքերի կողմից, հաղորդում է «Նոյան տապանը»:

Գլենդելում տեղի է ունեցել Իրանի թավրիզահայերի ամենամյա հավաք

ԳԼԵՆԴԵԼ, 7 ԱՊՐԻԼԻ, ՀԱՅԵՐՆ ԱՅՍՕՐ: Ապրիլի 5-ին Գլենդելում տեղի է ունեցել Թավրիզի հայերի ամենամյա հավաք, այնուհետեւ՝ նաեւ հանդիսավոր ճաշկերույթ: Միջոցառումը կրել է «Ջան Թավրիզ» անվանումը: Միջառաջանը մասնակցել են սուրբ Մարի եկեղեցու հոգևոր հովիվները:

«ՋԱՐԹՕՆԵԸ» ՍԿՍԵՑ ԿԵՐԱՐԱՏԱՐԱՎԿԵԼ

Լիբանանի մայրաքաղաք Բեյրութից լավ լուր ստացվեց՝ շուրջ 16 ամիս տեսած անհասկանալի դադարից հետո մայիսի 1-ին վերսկսել է լույս տեսնել Ռամկավար ազատական կուսակցության 71-ամյա պաշտոնաթերթը «Ջարթօնքը»: 1937-ի սեպտեմբերի 26-ին մեծ բանաստեղծ եւ ազգային-կուսակցական գործիչ Վահան Թեքեյանի խմբագրապետությամբ լույս տեսած թերթը հետագա տարիների

խմբագիրների՝ Յոզեֆինե Պոլոսյանի, Գերսամ Ախարոնյանի եւ հաջորդների ղեկավարությամբ ուղենշային դեր է կատարել սփյուռքահայ մամուլի պատմության մեջ, մասնավորապես Լիբանանի ու Սիրիայի հայագաղութների կյանքում: Դեռեւթար նրա ցավալի՝ 16-ամսյա լուրջությունը խոր տխրություն եւ անգամ զայրույթ էր առաջացրել ընթերցողական շրջանակներում:

Թերթի վերոհիշյալ համարում Լիբանանի խորհրդարանի ՌԱԿ անդամ Գալուստ Գասարճյանի հետ նորանշանակ խմբագիր Զրայր Կարապետյանի անցկացրած հարցազրույցից տեղեկանում ենք, որ 16 էջանոց «Ձարթօնքը» առժամանակ հրատարակվելու է երկշաբաթյա դրությամբ եւ որոշ ժամանակ անց փորձ է արվելու վերադառնալու օրաթերթային ռեժիմի: Տեղեկանում ենք նաեւ, որ թերթի սեփականատեր-արտոնատեր «Ձարթօնք ընկերակցություն» փոխարեն ստեղծվել է «Շիրակ հրատարակչական ընկերակցությունը» եւ Թեքեյան մշակութային միությունն ու Ռամկավար ազատական կուսակցությունը համասեփականատերերն են թերթի որպես իրավաբանական անձինք: Հավանաբար հետագայում առիթ ունենանք անդրադառնալու այս՝ քիչ մանվածապատ խնդրին, ինչպես նաեւ նախկին խմբագիր Պարույր Աղբաշյանի վերաբերյալ թերթի այս համարում լույս տեսած վարչական տգեղ «Ազդին», բայց մինչ այդ մեր գոհունակությունն արտահայտենք հայ մամուլի հնագույն անդամներից մեկի՝ «Ձարթօնքի» վերսկսման առթիվ:

ՇՐՈՒՄՆԵՐ «ՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ԻՐԱՆԱԿԱՅԵՐԻՆ ԱՆՆ ՏԵՂԱՓՈԽՎԵԼՈՒ

Մեր մեջ սովորություն կա դավադիր ամեն ինչի հետեւում «հրեական մատ» տեսնելու, կամ, առնվազն, մատնական կապեր փնտրելու: Ըստ երեւութին՝ այդպես ավելի հեշտ է, կարիք չկա հարցերի խորքը թափանցելու, հետաքննելու, վերլուծելու, վերջապես՝ ուղեղ աշխատեցնելու: Բայց այս դեպքում իսկապես հրեական կազմակերպության հետ գործ ունենք, այն էլ՝ 100 եւ ավել տարեկան: Կոչվում է՝ եբրայական գաղթականական օգնության ընկերություն (Hebrew Immigrant Aid Society (HIAS), Inc.):

Ավելի քան մեկ դար, ինչպես կարդում ենք ընկերության պաշտոնական կայքէջում (www.hias.org), HIAS-ն օգնություն է ցուցաբերել աշխարհի հրեաներին նրանց փրկելու, վերամիավորվելու եւ վերաբնակեցնելու գործում, եւ որպես «հրեական ավանդույթների եւ արժեքների արտահայտություն», չի՛ զլացել օգնության ձեռք մեկնելու նաեւ այլ ժողովուրդների, «ովքեր սպառնալիքի տակ են եւ ճնշված»: Ստեղծված լինելով 1881-ին, HIAS-ն օգնել է ավելի քան 4,5 մլն մարդու՝ հասնելու իրենց երազած ազատությանը, նրանց տեղափոխելով Իսրայել, Կանադա, Լատինական Ամերիկա, Ավստրալիա, Նոր Զելանդիա եւ այլուր, շարունակում ենք կարդալ կայքէջում: Այդ «փրկվածների» մեջ եղել են հարյուր հազարավոր մարդիկ նախկին խորհրդային Միությունից, Եգիպտոսից, Մարոկկոյից, Եթովպիայից, որոնք իրենց «նոր կյանքն են վերակառուցել» Մ. Նահանգներում:

Մարդկանց փրկելու այդ վե՛հ առաքելության մեջ կազմակերպությունն անշուշտ չի մոռացել նաեւ պարսկահայերին: Այս թերթի խմբագիրը վերջերս եղավ Թեհրանում եւ իրանահայ կրոնական թե ազգային մարմինների ներկայացուցիչների, ինչպես նաեւ մշակութային կազմակերպությունների անդամների հետ շփումների ընթացքում տեղեկացավ, որ HIAS-ը վերջին տարիներին մեծ փութաշարժությամբ հայերին էլ է ներառել իր «աստվածահաճո» առաքելության մեջ եւ օգնում է նրանց կազմակերպված ձեռք տարհանելու դեպի Մ. Նահանգներ: Կազմում է գաղթել ցանկացողների ցուցակներ, նրանցից յուրաքանչյուրից գանձում է 3000-ական դոլար եւ Իրանում Ավստրալիայի դեսպանատան միջոցով նրանց տեղափոխում է Կիեննա (որտեղ յուրաքանչյուրին վերադարձնում է 2900 դոլար) եւ այնուհետեւ կազմակերպում նրանց թռիչքը Մ. Նահանգներ:

Ըստ իրանահայ գաղութի պատասխանատուների, HIAS-ի միջոցով Մ. Նահանգներ են արտագաղթել (այս բառն այստեղ ճիշտ ենք օգտագործում, քանի որ հայրենամերձ այս

գաղթօջախն արդեն ունի շուրջ 400 տարվա պատմություն) մոտ 6000 հայեր: Սակայն ուրիշներ պնդում են, որ այդ թիվը շատ ավելի է, ավելացնելով նաեւ, որ եթե սկզբնական շրջանում արտագաղթող հայերն Իրանում էժան գնով վաճառում էին իրենց տունն ու բնակարանը նաեւ, վերջին գաղթողները, հետեւելով արդեն Մ. Նահանգներում գտնվող իրենց փորձառու բարեկամների հորդորներին, բարեբախտաբար չեն այրում վերադարձի բոլոր «կամուրջները»՝ պահում են իրենց տները:

Անշուշտ, բնակության վայր ու երկիր փոխելու իրավունքը որեւէ անհատի կամքն է, մարդու սրբազան իրավունքներից: Սակայն երբ այդ բանը կատարվում է հավաքաբար, կազմակերպված ձեռով եւ տարածաշրջանում հաստատ հետին նպատակներ ունեցող կազմակերպության կողմից, այն էլ մի երկրից, որտեղ հայերն ամենեւին իրենց վատ չեն զգում, մտածելու եւ մտահոգվելու տեղիք է տալիս:

Առայժմ մեկ կողմ թողնելով ավելի գլոբալ հարցը, թե ինչու արաբական երկրներից՝ Եգիպտոսից, Լիբանանից, Սիրիայից եւ Իրաքից, իսկ այժմ արդեն Իրանից հատկապես քրիստոնյաներին եւ նրանց թվում հայերին են փաստորեն գաղթեցնում, կազմակերպված գաղթի այս նոր ալիքը, այն էլ, կրկնում ենք, հայրենամերձ, հայրենաշունչ, պատմական, կենսունակ գաղթօջախից, կարիք ունի հակազդեցիկ միջոցների, մշակութային, եկեղեցական եւ քաղաքական հակաքայլերի՝ առաջին հերթին պետական մակարդակով:

Միջապագային

«ԱՊՐԻԼԻ 24-ԻՆ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՄԱՍՈՆՆԵՐԸ ԸՆԴՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՄՆԵՐ»

Այդ մասին, ըստ կենտրոնական գրասենյակն ԱՄՆ-ում գտնվող «Turkish-NY» գործակալության, հայտարարել է Ֆրանսիայի Մասոնական Մեծ Թեմեյք օթյակի մեծ վարպետ Ժան-Միշել Քիյարդեն: Նրա հայտարարությունն առիթ է տվել գործակալությանն ընդգծելու, որ Ֆրանսիայի մասոնները վերստին պատրաստվում են աջակցել «ցեղասպանության հայկական պնդումներին»:

Ինչո՞ւ վերստին: Պարզվում է մեծ վարպետ Քիյարդեն փետրվարին թուրքական մամուլին տված հարցազրույցում տվել է հարցի պատասխանը, ասելով. «Երկու տարի առաջ այցելել էինք Թուրքիայի ազատ մասոնների օթյակը, որտեղ, ամենայն քաղաքավարությամբ, թուրք եղբայրներից պահանջեցինք լրջորեն մտածել ցեղասպանության հարցի շուրջը եւ դրանում չքողարկել թուրք ժողովրդի պատասխանատվությունը: Թեեւ մեր խոսքերը հակազդեցություն առաջացրին, սակայն հետագայում թուրք եղբայրներից ոմանք մոտեցան ինձ եւ ասացին. «Դուք իրավացի էիք, որովհետեւ այս երկրում ոչ ոք չի արտահայտվում ցեղասպանության մասին»: Ապա կարգավորվեցին երկու օթյակների հարաբերությունները»:

Նույն հարցին ապրիլի 14-ի համարում անդրադարձել է նաեւ թուրքական «Վաթանը», որի տեղեկությամբ, մեծ վարպետ Քիյարդեն «թուրք եղբայրներին» ասել էր, որ Ֆրանսիան թեկուզ ուշացունով ճանաչեց Զոլյոթոսքը, նույն մոտեցումը Զայոց ցեղասպանության հարցում մենք ակնկալում ենք նաեւ Թուրքիայից:

Մեծ վարպետ Ժան-Միշել Քիյարդեն ապրիլի 24-ին ելույթ կունենա Փարիզում Մեծ եղեռնի զոհերին խորհրդանշող Կոմիտասի հուշարձանի մոտ, ապա իր մասն էղբայրների հետ կմասնակցի Ֆրանսահայերի կազմակերպած երթին: Երթն, ըստ «Վաթանի» կավարտվի Փարիզում Թուրքիայի գլխավոր հյուպատոսարանին առընթեր գործող զբոսաշրջության եւ մշակութային ներկայացուցչության առջեւ նախատեսվող բողոքի ցույցով:

«Վաթանը» միաժամանակ գրում է, որ մինչեւ ապրիլի 27-ը կազմակերպվող միջոցառումներին, որոնք կսկսեն 23-ին, իրավիճակն է նաեւ «Միություն ընդդեմ ցեղասպանության» կազմակերպության ղեկավար, հայ հասարակությանը քաջածանոթ Ալի Էրթեմը:

Հասարակական

ՌՌԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ՝ 10 ՏԱՐԻ ԱՆՑ



Ինչպիսի՞ն էին Հայաստանի երկրորդ նախագահի կառավարման տարիները

Վաղը կավարտվի Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի պաշտոնավարման ժամկետը, ինչը հնարավորություն է տալիս առավելագույնս օբյեկտիվ գնահատելու նրա կառավարման 10 տարիները, քանի որ գործող նախագահին տրվող գնահատականները սովորաբար դիտարկվում են այլ ենթատեքստում՝ համարելով, որ եթե դրական գնահատական է տրվում, արվում է նրան շողորթություն, եթե բացասական՝ փնտելվում նպատակով: Սակայն, անկախ որևէ բնորոշումից, փորձելու ենք տալ Հայաստանի երկրորդ նախագահի գործունեության օբյեկտիվ գնահատականը, հիմք ընդունելով վերոնշյալ 10 տարիներին Հայաստանի անցած ճանապարհը:

Ավնհայտ է, որ 1998-ի Հայաստանը եւ 2008-ի Հայաստանը միմյանցից էապես տարբեր երկրներ են, ինչն, ասենք, հնարավոր չէ ասել 1991-ի Հայաստանի եւ 1997-ի Հայաստանի մասին, երբ թվում էր, թե անվերջամալի էր մղծավանջը: Սա նշանակում է, որ, ասել, թե միեւնույնն է, երկիրը պետք է զարգանար, անկախ նրանից, թե ով եկավ իշխանության գլուխ 1998-ին, ուղղակի միամիտ ձեւանալու հետեւանք է:

Որ նման պնդումն անհեթեթություն է, կարելի է համոզվել ընթերցելով առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթը 1998-ի հունվարի 8-ի երկրի անվտանգության խորհրդի նիստում: Վերջինս, իրեն բնորոշ վերին ճշմարտության տոնով, ասում էր, որ առանց Լեւոնյանի Ղարաբաղի խնդիրը լուծելու (նկատի ունենալով իր ցանկացած լուծումը, ինչը նրա հրաժարականի պատճառ դարձավ-Ա. Մ.) Հայաստանին տնտեսական փլուզում է սպասում: Նախկին նախագահը խոսում էր Հայաստանի «ֆիզիկական լիմիտների» սպառնան մասին, որն, ըստ նրա, տեղի կունենա շրջափակման, ներդրումների եւ արտահանման բացակայության պատճառով եւ որի հետեւանքով աղետի գոտու շինարարությունը կծածովի «տասնյակ տարիներ», «խղճուկ» թռչակները եւ աշխատավարձերը կշարունակվեն արժեզրկվել, ինչպես նաեւ ազգային արժույթը, գործազրկությունը կխորանա: Ավելի առարկայական ապացույց, որ միեւնույնն չէ, թե ով կղեկավարի երկիրը, որպեսզի այն զարգանա, հենց առաջին նախագահի խոսքերն են: Հակառակ այդ պարտվողական եւ մռայլ կանխատեսումների, 1998-ին հաջորդող տարիներին Հայաստանը, արդեն առանց նրա, զարգացում ապրեց, որը Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի եւ միջազգային ֆինանսական այլ կազմակերպությունների մասնագետները բնորոշում են որպես «տպավորիչ աճ»:

Ռոբերտ Քոչարյանի կառավարման տարիներին տնտեսության մեջ արձանագրված կտրուկ աճը հենց այնպես տեղի չէր կարող ունենալ, ճիշտ այնպես, ինչպես հենց այնպես չէին կարող առաջանալ, ասենք, առաջին անհրաժեշտության ապրանքների ներմուծման ոլորտում մենաշնորհները եւ

առանձին խոշոր գործարարների կամ օլիգարխների արտոնյալ գործունեությունը:

Ըստ ոլորտների փորձենք ներկայացնել մեր տնտեսության մեջ տեղի ունեցածը: 1998-ից սկսած Հայաստանում առաջինը միջոցառումներ ձեռնարկվեցին գյուղմթերքների վերամշակման եւ սննդի արդյունաբերության վերականգնման համար: Այժմ գործում են կաթնամթերքի, մսամթերքի, քաղցրավենիքի, ոգելից եւ ոչ ոգելից խմիչքների, պահածոների եւ այլ ապրանքների արտադրության մի քանի տասնյակ ընկերություններ:

Հաջորդ խոշոր ճյուղը, որ սկսեց գործել եւ դարձավ արտահանման մեջ առաջնային ճյուղ՝ հանքարդյունաբերությունն է: Վերագործարկվեցին Ալավերդու, Ախթալայի, Կապանի եւ Ագարակի կոմբինատները, մեծ ծավալներով սկսեցին գործել Քաջարանի կոմբինատը, «Մաքուր երկաթի գործարանը», ստեղծվեցին հանքանյութի մշակման նոր ձեռնարկություններ, արդիականացվեց եւ բարձր արդյունավետության արտադրանք սկսեց թողարկել «Արմենալը» («Կանազը»):

Ռոբերտ Քոչարյանի նախագահության տարիներին ամենաբուռն զարգացում ապրած արդյունաբերության ճյուղը ադամանդագործությունն էր, որը երկար ժամանակ միանշանակ առաջատար էր մեր արտահանման մեջ, բայց վերջին մեկ-երկու տարում, միջազգային գներով պայմանավորված, անկում է ապրում:

Տեղեկատվական տեխնոլոգիաները, որոնց մասին 1998-ին քչերն էին լսել Հայաստանում, այսօր մեր կյանքի անբաժանելի մասն են: Թեեւ պետք է նշել, որ ավելի բարձր արդյունքների կարելի էր հասնել:

Վերջին երկու-երեք տարիներին բջջային կապի արագընթաց զարգացում ունեցավ, երբ վերացվեց «Արմենտելի» մենաշնորհը: Բջջային կապի երկրորդ օպերատոր «Վիլյատելի» մուտք գործելուց հետո Հայաստանում ավելի քան 1,5 մլն մարդ դարձան կապի այդ տեսակից օգտվողներ:

Եներգետիկ անվտանգության առումով խոշոր քայլեր արվեցին: Հիշատակենք դրանցից կարեւորագույնը, որը նաեւ քաղաքական ու ռազմավարական նշանակություն ունի՝ Իրան-Հայաստան գազամուղի կառուցումը: Ինչպես նաեւ այս տարիներին կառուցված մի քանի տասնյակ փոքր ՅԷԿ-երը, վերականգնված փուլում գտնվող Երեւանի եւ Հրազդանի ՋԷԿ-երը, Աբովյանի գազապահեստարանների ընդլայնումը: Ռոբերտ Քոչարյանի օրոք սկսվել են նաեւ Մեղրիում խոշոր հայ-իրանական ՅԷԿ-ի, Հայաստանի նոր ատոմակայանի, նավթավերամշակման գործարանի կառուցման ծրագրերի նախապատրաստումը, որոնց իրականացումն արդեն հաջորդ նախագահի խնդիրը պետք է լինի: Չմոռանաք նաեւ Հայաստանում գազաֆիկացման աննախադեպ ծավալները, ինչի շնորհիվ հարյուր-հազարավոր մարդկանց կենցաղը արմատապես փոխվեց:

Հանրային ծառայությունների ոլորտից արժե հիշատակել Երեւանում խմելու ջրի շուրջօրյա մատակարարման հասնելու ծրագիրը: Այստեղ հարկ է նշել, որ այն կիսով չափ կյանքի կոչվեց եւ 2005-ին Երեւանի 80 տոկոսը չապահովվեց շուրջօրյա ջրով, բայց ընդհանուր առմամբ մայրաքաղաքի ջրամատակարարումն էապես բարելավվեց: Միաժամանակ նշենք, որ Հայաստանի մարզերում այս խնդրի լուծման ուղղությամբ օտարերկրյա ներդրողներ են ներգրավվել, բայց առայժմ դրական փոփոխություններն այստեղ մեծ չեն:

Բանկային համակարգի առաջանցիկ զարգացումը վերջին տարիներին այնքան ակնհայտ է, որ դարձել է ամենահրապուրիչն օտարերկրյա ներդրողների համար: Երեւի շատերն են մոռացել 90-ականների անբաժանելի մաս դարձած գրպանային բանկերը եւ նրանցից խաբված ավանդատուներին: Հավանաբար այդ ավանդատուներից շատերն էլ դա չեն հիշում, 2008-ին ծայր տալով այդ տարիների նախագահին:

1998-ին, չնայած երկրաշարժից անցել էր 10 տարի, աղետի գոտում համատարած ժամանակավոր տնակներ էին եւ կիսակառույց շենքեր: Տասնյակ հազարավոր ընտանիքներ անցած 10 տարիներին ունեցան իրենց նորակառույց բնակարանները, եւ սա թերեւս Ռոբերտ Քոչարյանի կառավարման ամենամեծ ձեռքբերումներից էր: Միեւնույն

ժամանակ, դեռ 6 հազար ընտանիքներ, հատկապես աղետի գոտու գյուղերում շարունակում են ապրել ժամանակավոր տնակներում:

Ճանապարհաշինության եւ քաղաքաշինության վրա երեւի չարժե մանրամասն կանգ առնել, քանզի բոլորն են հիշում Երեւանի եւ հատկապես Երեւանից դեպի մարզեր գնացող քարուքանդ եղած ճանապարհները 10 տարի առաջ եւ տեսնում դրանց վիճակն այժմ: Երեւանի կառուցապատումը որքան էլ շատերի համար ավելորդ շքեղություն է թվում, բայց 20-ականներին էլ նույնպիսի շքեղություն էր թվում Զանրապետության հրապարակի համալիրի կառուցումը: Սպասարկման ոլորտը հատկապես Երեւանում նույնպես բուռն զարգացում է ունեցել տաքսի ծառայություններ, սրճարաններ, ռեստորաններ, սուպեր-մարկետների ցանցեր, ավտոնորոգման եւ ավտովագման կետեր եւ այլն: Զբոսաշրջության զարգացումը, մի քանի տասնյակ նոր հյուրանոցների բացումը մայրաքաղաքում եւ առողջարանային քաղաքներում ու նաեւ գյուղերում եւս անկասկած չեն կարող մնալ:

Զնայած 90-ականների նման Զայաստանի շրջափակումը շարունակվում է, բայց արտաքին առեւտրաշրջանառությունը 2007-ին 1997-ի նկատմամբ ավելացել է 4 անգամ: 1997-ին կազմում էր 1 մլրդ 126 մլն դոլար, 2007-ին՝ 4,5 մլրդ դոլար: Միայն արտահանումն անցյալ տարի կազմել է 1 մլրդ 218 մլն դոլար, որ ավելի էր, քան ամբողջ առեւտրաշրջանառությունը 1997-ին: Իսկ նույն 1997-ին Զայաստանից արտահանվել է ընդամենը 232 մլն դոլարի ապրանք՝ ավելի քան 5 անգամ քիչ 2007-ից: Զնոռանանք, որ արտահանման այդ խղճուկ ծավալներն ապահովում էին հիմնականում որպես մետաղի ջարդոն վաճառվող ձեռնարկությունների սարքավորումները: Ներմուծումը 2007-ին կազմել է 3 մլրդ 281 մլն դոլար, իսկ 1997-ին 892 մլն դոլար էր:

Զամախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) 2007-ին Զայաստանում կազմեց 3 տրիլիոն 140 մլրդ դրամ, 1997-ի 978 մլրդ դրամի դիմաց: Այսինքն, մեր ՀՆԱ-ն անցած տարիներին ավելի քան եռապատկվել է: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 1997-ին 422 դոլար էր, հիմա մոտ 3000 դոլար: Միջին աշխատավարձը 1997-ին 13 հազար դրամ էր, 2007-ին՝ 77 հազար դրամ: Ազգային արժույթը՝ դրամը, հակառակ առաջին նախագահի կանխատեսումներին, ոչ միայն չի արժեզրկվել, այլև վերջին 4 տարում արժեւորվել է ավելի քան 40 տոկոսով: Եվ վերջապես՝ կատարված ներդրումները Զայաստանում 1997-ին կազմել են 287 մլն դոլար, 2007-ին դրանց ծավալները կազմել են մոտ 1,2 մլրդ դոլար:

Առավել քան ակնհայտ է, որ առանց պետական ակտիվ քաղաքականության տնտեսական զարգացում տեղի չէր կարող ունենալ, չնայած Զայաստանի աշխարհաքաղաքական պայմանները չեն փոխվել 90-ականների համեմատ: Զետեւաբար պատերազմով, աղետի գոտիով կամ շրջափակմամբ պատճառաբանել երկրում տիրող սոցիալ-տնտեսական անմխիթար վիճակը, ինչն արվում էր առաջին նախագահի տարիներին, միայն վատ կառավարումն արդարացնելու ձեւեր են: Անկասկած է, որ թեւեւ հիմա պատերազմ չկա, բայց վերջին 10 տարիներին Զայաստանի կողմից կատարվող ռազմական ծախսերը տասնապատիկ գերազանցում են 90-ականներին արվող ռազմական ծախսերին, բերելով բանակի ու երկրի պաշտպանունակության ամրապնդմանը:

Ինչ վերաբերում է արտաքին քաղաքականությանը, ապա այստեղ գլխավոր հաջողությունն այն էր, որ դարաբաղյան հակամարտության կարգավորման միջնորդների առաջարկներում այժմ նշվում է Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի մասին, ինչի մասին խոսք անգամ չկար 1997-ին արված առաջարկներում: Միաժամանակ, հարկ է ընդգծել, որ արտաքին քաղաքականության բնագավառում խոշոր բացթողումներ են եղել եւ կան Ադրբեջանի հետ քարոզչական ու դիվանագիտական պայքարում: Անցած տարիներին Զայաստանը ոչ միայն չկարողացավ որեւէ միջազգային կառույցում Ադրբեջանին վատ վիճակի մեջ դնող գեթ մեկ բանաձեւ կամ որոշում նախաձեռնել ու անցկացնել, այլև անկարող եղավ դիմագրավելու այդ նույն միջազգային կառույցներում ադրբեջանական նախաձեռնություններին: Այս

առումով արդեն Ռոբերտ Քոչարյանը վատ ժառանգություն է թողել իր հաջորդին:

Վերադառնալով տնտեսական քաղաքականությանը, հարկ ենք համարում արձանագրել, որ բացի մենաշնորհների առատությունից, որոնք ձեւավորվել են Ռոբերտ Քոչարյանի նախագահության տարիներին, Զայաստանում սովորաբար տնտեսության ծավալները մեծ են համեմատած անգամ ԱՊՀ երկրների հետ: Միաժամանակ, սոցիալական բեւեռացման առումով նույնպես Զայաստանն ունի ամենավատ ցուցանիշները: Խոսքը ամենահարուստ եւ ամենաաղքատ մարդկաց եկամուտների տարբերությանն է վերաբերում:

Գործարարները մշտապես բարձրացրել են հավասար մրցակցային դաշտ ունենալու հարցը, բայց առայժմ հովանավորչությունն ու «տանհիքները» բնորոշ են ինչպես խոշոր գործարարներին, այնպես էլ միջիններից եւ փոքրերից շատերին: Զարկային վարչարարությունը թեւեւ որոշակիորեն բարելավվել է, բայց հեռու է բավարար լինելուց: Վիճակն առավել վատթար է մաքսային համակարգում, չնայած վերջին տարիներին այստեղ ներդրվող նոր սարքավորումներին:

Դատախազությունն ու հատկապես դատական համակարգը Զայաստանի ամենաքարացած եւ ամենակոռուպացված ոլորտներն են, որտեղ «բարեփոխումները» սահմանափակվել են նոր, ժամանակակից հարմարություններով շենքեր նրանց տեղափոխվելով: Դրանց բովանդակությունը վերջին 10 տարիներին նույնն է, ինչ վերջին տասնամյակներում: Զայաստանում քչերն են հավատում, որ առանց կաշառքի դատարաններում արդարությունն ու օրենքը կարող են հաղթել:

Նախագահ Ռոբերտ Քոչարյանը տարբեր տարիներին նախարարական պաշտոններում է նշանակել մարդկանց, ովքեր բացարձակապես չեն համապատասխանել իրենց պաշտոններին: Այսօր էլ նրանցից ոմանք շարունակում են պաշտոնավարել: Իհարկե, գործող նախագահի նշանակումներում կան նաեւ բարձր մասնագիտական պատրաստվածության անձինք (Տիգրան Սարգսյան, Սանուկ Վարդանյան, Ներսես Երիցյան եւ այլք): Պետք է նշել, որ նշանակումներից շատերը նախագահը կատարում է, ելնելով խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժերի դասավորումներից:

Ռոբերտ Քոչարյանի համար նախագահի պաշտոնում գտնվելիս ամենածանր փորձությունները 1999-ի հոկտեմբերի 27-ն էր եւ 2008-ի մարտի 1-2-ը: Առաջին դեպքում նրան հաջողվեց հասնել այն բանին, որ ոճրագործություն կատարողները ողջ մնան եւ տեղի ունենա բաց դատավարություն: Թեւեւ դա չնվազեցրեց քաղաքական շահարկումներն այս դեպքի շուրջը: Զնայած այդ դեպքը նաեւ մեծ վնաս հասցրեց Զայաստանի միջազգային վարկանիշին, բայց դրան հաջորդած 2000 թվականից սկսվեց Զայաստանի տնտեսական բարձր աճը:

2008-ի նախագահական ընտրություններին հաջորդած շրջանում, որն ավարտվեց մարտի 1-2-ի անկարգություններով, Ռոբերտ Քոչարյանը կանգնած էր դժվար երկընտրանքի առջեւ՝ միաժամանակ ցանկանալով երկիրը գրծ պահել ցնցումներից եւ չցանկանալով ուժ գործադրել առաջին նախագահի հրահրած ապօրինի գործողությունների առնչությամբ: Այս հապաղումը բերեց մարտի 1-2-ի իրադարձություններին: Ռոբերտ Քոչարյանն, ի վերջո, ուշացումով դիմեց ուժային գործողությունների՝ զսպելու համար անկառավարելի դարձած ցուցարարներին: Գուցե եւ չլինեին այդ զոհերը, եթե երկրի նախագահը չարտոնված հանրահավաքների հենց առաջին իսկ օրը կասեցներ դրանք: Սակայն միանշանակ է, որ նա պարտավոր էր պաշտպանել պետությունը քաղաքացիական պատերազմի սպառնալիքի վերածվող վտանգից, ինչը թերեւս նրա ամենամեծ եւ դեռեւս մեծամասնության կողմից չգիտակցված ծառայությունն էր Զայաստանին: Քանի դեռ հայտնի չէ, թե կկարողանա՞ մնա վճռակա՞նություն դրսեւորել անհրաժեշտության դեպքում Սերժ Սարգսյանը, քանի դեռ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի կողմից արկածախնդրությունների վտանգը շարունակում է սպառնալ Զայաստանի Զանրապետությանը, քանի դեռ հարեւան Ադրբեջանը մնա առիթի է սպասում Զայաստանի հետ պատերազմը վերսկսելու համար, կարծում ենք, որ Ռոբերտ

Քոչարյանի վճռակառուցման կարիքը հատկապես երկրի անվտանգության եւ պաշտպանունակության հարցերում մնում է, առնվազն խորհրդատվական կարգով:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԻՆՉՊԻՍԻՆ ԿԿԻՆԵՆ ԱՐՏԳՈՐԵՆԱԽԱՐԱՐ ՎԱՐՈՒՆ ՕՍԿԱՆՅԱՆԻՆ



Հայաստանը փոփոխությունների ժամանակաշրջանում է, հեռացող կառավարությունից թերեւս ամենաաչքի ընկնող գործիչը արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանն է, որի կյանքին ու կենսագրությանը, կարծում եմ, արժե ավելի մանրամասն անդրադառնալ:

Վարդան Օսկանյանը ծնվել է 1955-ի փետրվարի 7-ին Սիրիայի Հալեպ քաղաքում, ավարտել է տեղի հայկական դպրոցը եւ կրթությունը շարունակել Երեւանի Պոլիտեխնիկական ինստիտուտում: Հետագայում կրթությունը շարունակել է Բոստոնի Թավթսի համալսարանում: Մի քանի տարի աշխատելով մասնավոր մի ընկերությունում, նա շարունակել է ուսումը արդեն Հարավարդի Կառավարման դպրոցում, հետո սովորել եւ ավարտել է Ֆլետչերի դիվանագիտության դպրոցը, ստանալով մագիստրոսի կոչում: 1990-ին հիմնում է AIM (Armenian International Magazine) հանդեսը: 1992-ին, երբ Հայաստանը նոր էր անկախություն ձեռք բերել, վերադառնում է հայրենիք եւ աշխատանքի անցնում նորաստեղծ արտաքին գործերի նախարարությունում, սկզբում որպես Միջին Արեւելքի վարչության պետի տեղակալ, հետո որպես պետ: Ավելի ուշ նշանակվում է նաեւ Հյուսիսային Ամերիկայի վարչության պետ: 1994-ին դառնում է Հայաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ, 1996-ից արդեն առաջին տեղակալն էր: Այդ տարիներին Օսկանյանը, որպես իրավիճակի պրոֆեսոր, դասավանդում է Հայաստանի ամերիկյան համալսարանում:

1998-ին Օսկանյանը նշանակվում է Հայաստանի արտաքին գործերի նախարար, ինչից հետո Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ սկսվում է մի նոր ժամանակաշրջան՝ օսկանյանական ժամանակաշրջանը, ինչը շատ դիվանագետների բնորոշմամբ, Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ հավասարակշռության եւ լրջախոհության ժամանակաշրջան էր: Վարդան Օսկանյանի առաջ քաշած կոնալեմենտարիզմի՝ փոխլրացման քաղաքականությունը թեւ արժանացավ ու նույնիսկ մինչ օրս արժանանում է շատերի քննադատությանը, սակայն անցած 10 տարիները ցույց տվեցին դրա կենսունակությունն ու Հայաստանը ստեղծված ծանր իրավիճակներից դուրս բերելու ընդունակությունը: Ընդհանրապես անցած 10 տարիները, շատերի բնորոշմամբ, հայկական կարգային դիվանագիտության կայացման տարիներն էին: Իզոլ չէ, որ այսօրվա կարգային դիվանագետներից շատերը Վարդան Օսկանյանին համարում են իրենց ուսուցիչը: Օսկանյանի ղեկավարած գերատեսչությունը միշտ տարբերվել է կառավարության մյուս նախարարություններից իր ազատական հայացքներով եւ կարծիքներն անկեղծորեն արտահայտելու հնարավորությամբ: Սա նաեւ Օսկանյան մարդուն բնորոշ երեւույթ է: 1998-ի իշխանափոխությունից հետո, երբ նա սկսեց ղեկավարել արտաքին քաղաքական գերատեսչությունը, դեմ էր կարգային փոփոխությանը ըստ մարդկանց քաղաքական հայացքների, ինչը, նկատենք, իր արձագանքն ունեցավ 2008-ի

փետրվարին: Սակայն անկախ ամեն ինչից, դիմացիճիւր պրոֆեսիոնալ որակներով, այլ ոչ թե քաղաքական հայացքներով գնահատելու օսկանյանական կարողությունն այսօրվա կառավարությունում հազվագյուտ երեւույթ է: Ինչեւէ, Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ անցած 10 տարիները դեռ լուրջ մեկնաբանման ու վերլուծության կարիք ունեն, սակայն արդեն այսօր իսկ կարող ենք գնահատել որպես ընդհանուր առմամբ հաջողության ժամանակաշրջան: Եվ նույնիսկ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում ադրբեջանական բանաձեւի անցկացման շուրջն առկա քննադատությունը իր ձեւի մեջ անբովանդակ է: Քանի որ բանաձեւը պաշտպանող 39 կողմ երկրներին դեմ դուրս եկան նույն այդ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի եւ ԵԱՀԿ Մինսկի խումբը համանախագահող 3 երկրները՝ ԱՄՆ-ը, Ռուսաստանը եւ Ֆրանսիան, ինչն ավելին արժե, քան կողմ քվեարկած բոլոր երկրները միասին: Եվ հետո, չմոռանանք, որ 1992-94-ին ՄԱԿ-ը Անվտանգության խորհրդի մակարդակով նմանատիպ 3 որոշում էր ընդունել, որով ճանաչվել էր Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, ինչը չգիտես ինչու մոռացության են մատնվում քննադատողները:

Օսկանյան դիվանագետի պրոֆեսիոնալ որակների մասին խոսում են բոլորը: Դիվանագետները նշում են ոչ միայն նրա արտակարգ հիշողությունը, երբ նա բանակցությունների ժամանակ կարող էր միանգամից մերժել ադրբեջանական կողմի առաջ քաշած «նոր» գաղափարը, հիշեցնելով, որ 13 կամ 14 տարի առաջ նման հարց արդեն առաջարկվել, քննարկվել եւ մերժվել է: Օսկանյանը նաեւ փայլուն հռետոր է, կարողանում է գրավել լսարանը, եւ չնայած շատերը նրան քննադատում են չափից ավելի հուզականության համար, սակայն դա էլ խոսում է նրա անկեղծության մասին, ինչը նույնպես համոզիչ է լսարանի համար:

Ինչեւէ, առաջին անգամ նախկին կառավարողները իշխանությունից հեռանում են կամավոր ու չչարացած, ինչն արդեն իսկ դրական երեւույթ է: Մի բան պարզ է, որ Վարդան Օսկանյանի մակարդակի պետական գործիչները պետք է մնան քաղաքականության մեջ, որպես հզոր անհատներ, որոնց հեղինակությունը եւ բարոյական ու մարդկային նկարագիրը միշտ էլ կարող են չափանիշ լինել մյուսների համար: Անցած 10 տարիների ընթացքում Օսկանյանը կարողացավ պահպանել վստահության բարձր մակարդակը Հայաստանի քաղաքացիների շրջանում, ինչի վկայությունը 2007-ի հոկտեմբերին «Գելափի» անցկացրած հարցումներն էին:

Վերջում կարող ենք հավելել միայն, որ բարդ տարածաշրջանում ապրող Հայաստանի համար կարեւոր է Վարդան Օսկանյանի մակարդակի դիվանագետի առկայությունը, հատկապես դարաբաղում քննարկի բանակցությունների եւ տարածաշրջանում տերությունների կողմից հզորացող մրցակցության պայմաններում: Վարդան Օսկանյանը հեռանում է հետեւից թողնելով կարգային դիվանագետների, որոնք անցել են դիվանագիտության օսկանյանական դպրոցը:

ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ

Միասնական աշխատանք տանելու հասկացողությունը ըստ դաշնակցության

Մեր համայնքում Եղեռնի զոհերի ոգեկոչման ծրագրերը անցկացնելու նպատակով, բացի ՀՄՄ «ՌաՖՖի» համալիրի, Հայ Բարեգործական Ընդհանուր Միության, Իրանահայ Ազգային և Մշակութային միության ու «Արաքս» շաբաթաթերթի ձեռնարկներից, Թեմական հորհրդի նշանակված հանձնախմբի կողմից անց կացվեց չորս միջոցառում, որոնց կոչում էին «միասնական» ձեռնարկ: Այս ձեռնարկների բանախոսներն էին Հայ Դեղափոխական Դաշնակցության բյուրոյի անդամ պրն. Վահան Զովհանիսյանը Հայաստանից, Իրանի ՀՅԴ-ի ղեկավարներից ու դաշնակցության «Ալիք» օրաթերթի գլխավոր խմբագիր պրն. Դերենիկ Մելիքյանը և մի շարք այլ դաշնակցականներ: Ընտրված էր հատկապես կուսակցական երգացանկ:

Այսպիսով, տեսնում ենք կուսակցությունը միասնականությունը հասկանում է՝ «Միասին իմ դրոշի տակ» հասկացողությունը: Ժամանակակից աշխարհում ոչ մի տեղ նման միասնական աշխատանք չենք գտնի և նման երևույթներ բնորոշ են մեր ազգի դաշնակցություն կուսակցությանը և հատկապես մեր համայնքի դաշնակցությանը, որը բխում է կամ նրանց չիմանալուց, կամ էլ շատ նեղմտությունից: Մնում է միայն ցանկանալ նրանց զարգացում ժողովրդավարական ասպարեզում և երևութների ճիշտ ըմբռնում, որը կուսաստի առաջին հերթին իրենց առողջացմանն ու ազգի միասնականությանը: Մեր համայնքի դաշնակցական լիզերները վաղ թե ուշ պետք է հրաժարվեն նեղմտություններից և դառնան ժամանակակից ու շարժվեն ժամանակի հետ: Սա է թելադրում առաջին հերթին հենց կուսակցության շահերը:

Մշակույթ

Մշակութային Սեմինար - Սառ 2

Պրն. Սեդրակ Գոջամանյանի գեկույցը «Երիտասարդություն, մշակույթ եւ միություններ» թեմայով

«Իրանահայ համայնքը ամենայուրահատուկն է դրական կամ բացասական իմաստով: Եթե մյուս համայնքների հետ համեմատություն անցկացնենք, կտեսնենք, որ իրանահայ համայնքը տարաբնույթ համայնք է, որովհետև օրինակ, երբ ուզում ենք լիբանանահայության մասին խոսենք, պարզ կարող ենք ասել որտեղից են եկել և բնակչության խոշոր տոկոսը միատարր են, բայց իրանահայությունը այդպես չէ, և սա բոլորիս հայտնի է:

Ես իրանահայերին քանի մասի եմ բաժանում, որպեսզի լավ հասկանալի լինի՝ 1- Ատրպատականի հայեր, որոնք մի քանի հանգրվաններում համայնքի կազմավորման գործում դեր են ունեցել: Ատրպատականի հայերի մի մասը եկել են պատմական Հայաստանից, իսկ աշխարհագրական առումով շփվել են Կովկասի, Ռուսաստանի և ավելի ուշ, այսինքն՝ 19-րդ դարի վերջում, հայաստանաբնակների հետ: Ֆրանսիական և ամերիկյան քոլեջները և Թավրիզի թեմական դպրոցը իրենց ազդեցությունն են թողել մեր ազգային, հասարակական ու մշակութային կյանքի վրա:

Այսօրվա իրականության մեջ հայերի մեծամասնությունը Շահ Աբասի քաղաքականության արդյունքում եկել և Նոր Ջուղայում են բնակվել և այլ գավառներ են կազմել: Նոր Ջուղան շփվել է Հնդկաստանի հետ, գնացել են այնտեղ կրթվելու և դրանք կազմել են Չար Մահալ գավառը, նրանք անգլիացիների հետ շփման մեջ են եղել և դա իր ներդրումն է ունեցել իրանահայ մշակույթի վրա:

Մեր նորօրյա կյանքի էջերում մեծ դեր են խաղում երեք խավեր՝ 1- եղեռնից փրկվածներ կամ վերապրողներ, որոնք տարբեր ճանապարհներով Իրան են եկել:

2- Հայաստանի առաջին հանրապետության անկումից հետո մի շարք քաղաքական մտավորականներ մուտք գործեցին Իրան, որոնք կազմեցին մեր ապագա ազգային, հասարակական և նույնիսկ գեղարվեստական ու մշակութային ղեկավարների մի հզոր բանակ:

3- Ռուսաստանի հեղափոխությունը և ռուսահայ մտավորականների մուտքը Իրան և նրանց ազդեցությունը մեր մշակութային կյանքի վրա:

Այսպիսով տեսնում ենք, որ իրանահայերս յուրահատուկ ենք և այսօր ճաշակների տարբերությունը մեծ դեր է խաղում մեր մշակութային, ազգային ու վարվելակերպի ասպարեզներում: Անհանդուրժողականությունը նաև գալիս է հենց այդ տեղից, օրինակ, թավրիզահայությունը դժվար է հանդուրժում նոր Ջուղայի հայությանը: Սա իրականություն է և սրանից խուսափել չի կարելի: Մեր մշակութային կյանքը անկում է ապրել համեմատ անցյալի, ըստ իս դրա պատճառները հետևյալներն են.

1- Մենք, որպես սփյուռքահայ, երկուսյան մեջ ենք, չգիտենք թե լրիվ հայ ենք, թե լրիվ իրանցի, սա ենթամշակութային տպավորություն է ստեղծում մեզ մոտ:

2- Արևմտյան հարմարությունները՝ ինտերնետ և արբանյակ, որոնք պատճառ են դառնում, որ մի բացասական ազդակ էլ ավելանա այդ երկուսյամբ ապրող սփյուռքահային և նույնիսկ այսօրվա երիտասարդը մտածում է, որ ինքը իրանցի՞ է, հայ՞ է, թե՞ աշխարհաքաղաքացի: Եթե աշխարհաքաղաքացի է, ի՞նչ դիրք է զբաղվում համաշխարհային իրականության մեջ:

3- Իրանահայությունը երկու ծայրահեղության մեջ է. ոմանք մեզ շատ են գերադասում իրանցի մյուս հայրենակիցներից և, որպես ազգային փոքրամասնություն, շատ են մեծացնում մեզ. ակտիվանում ենք համայնքում և ստեղծել ենք փոքր մի պետություն և նեղ կաղապարի մեջ ենք մտել և բավարարվում ենք դրանով և դրա համար ավելին չենք զարգանում:

4- Երկրի քաղաքական և տնտեսական իրավիճակն էլ պատճառ է դարձել, որ մշակութային կյանքն անկում ապրի և դրա պատճառներն հայտնի են:

5- Արտագաղթը ևս մեկ պատճառ է: Ոմանք ասում են՝ Հայաստան գնալը ներգաղթ է, բայց ես ասում եմ՝ դա արտագաղթ է, որովհետև շատ որ գնում են, հատկապես նրանք, որ համայնքում կշիռ էին ներկայացնում և հեղինակություն ունեին, ունենում են բացասական հետևանքներ և բացասական են ազդում մեր համայնքի իրականության վրա:

Դպրոցների մշակութային կյանքին չեն անդրադառնում, որովհետև չեն առնչվում դրա հետ և հայկական դպրոց էլ չեն գնացել, այդ իսկ պատճառով հիմա կուզեն խոսել միութենական մշակույթի մասին: Միության ստեղծումը եղավ հայապահպանության նպատակով, որտեղ մի խումբ երիտասարդների հավաքելն էր և հայեցի դաստիարակություն տալը: Նախկինում շատ էլ ճիշտ է եղել միություն ստեղծելու համար այս ձևը, բայց տեսնենք այսօրվա իրականությունը ինչ է: Այսօրվա միությունները ղեկավարվում են հենց հին սիստեմով և հենց հին մտածելակերպով՝ ինչպես 40 տարի առաջ: Սա դառն իրականություն է և մեր ակնկալիքը և մեր մտածելակերպը աշխարհի և նույնիսկ իրանական իրականության հետ չի համապատասխանում իրականությանը:

Միութենական կյանքում շատ հարցերի շուրջ մասնագիտականորեն պետք է մոտենալ: Այն կարծիքը գոյություն ունի, որ սփյուռքը մշակութային արժեքներ չի կարող ստեղծել, որովհետև ստեղծագործության համար անհրաժեշտ է երկիր, պետություն, հող և այլն: Սա իրականություն է: Հիմա տեսնենք ինչ է միությունների ղեկավարների քաղաքականությունը գեղարվեստի և արվեստի նկատմամբ. երկու մոտեցում գոյություն ունի՝ արվեստը հանուն արվեստի և արվեստը հանուն ժողովրդի: Միությունների ղեկավարները նախընտրել են արվեստը հանուն ժողովրդի քաղաքականությունը: Ավելի շուտ ժողովրդին բավարարելու համար: Սա իր բացասական հետևանքներն է ունեցել մեր ավելի լավ արվեստագետների վրա և այդ իսկ պատճառով նրանք կամ գնացել են իրանական գեղարվեստի ասպարեզ, կամ էլ՝ իրենց համար մասնագիտական աշխատանքով են զբաղվել: Մենք աշխատել ենք արվեստը ծառայեցնել մեր համայնքային աշխատանքներին: Օրինակ, Ապրիլի 24-ի կամ ուրիշ միջոցառումների ժամանակ երբ ձեռնարկ ենք կազմակերպում շատ երկար բացման խոսք ենք ասում, այսինչ երգչախմբին ասում ենք՝ երեք հատ երգ երգեք, մի խմբի ասում ենք՝ երկու հատ ասում ենք ասեք և պարախմբին ասում ենք՝ քանի հատ պար պարեք: Ես կարծում եմ՝ ամենամեծ ողբերգությունը այն է, որ արվեստագետ ստիպված է լինում փոխել իր արվեստի ուղղությունը: Վերջերս արվեստը դարձել է եկամտի աղբյուր, հայաստանից խմբեր ենք բերում և եկամտոտ ենք հավաքում, փողաբերում մեկին ուղարկենք մասնագիտություն ստանա այդ գործում: Նորից կապ ունի անհատական ճաշակներին և ամենակարևորը՝ երկարատև ծրագիր գոյություն չունի: Միությունների վարչությունները ընտրվում են երկու տարին մեկ, երկու տարվա մեջ չի կարելի երկարատև ծրագիր ունենալ: Կարծում եմ, պետք է լինի արվեստի կենտրոն և ժողովրդական թատրոն և չպետք է միայն խաղանք հայկական հասարակության համար, այլ պետք է դառնա պարսկական «արվեստագետների տան» մի մասը: